

## ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿԱՆ

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍԻ

Ի ՀԱՅԴՅԻՆԿ ՄԵՐՁ Ի ՎԻԵՆԱ

« Եթէ ճշմարիտ է որ ժողովրդեան մեծ մասը կը հաւանի զիս Մեքսիկոյ իշխան անուանող վիճակարկութեան, կը մեկնիմ քսան և չորս ժամու մէջ... այն դաշամբ որ ազգային կամքը այնու կերպով յայտնուի, որ ամենեկին տարակոյս չմնայ իմ ազատ ընտրութեանս վրայ »:

Էր ամն 1864, երբ Մաքսիմիանոս Արչիդուքս Աւստրիոյ կ'ըսէր այս խօսքերս այն պատգամաւորաց, որք ներկայանալով իշխանին, կ'ընծայէին իրեն Մեքսիկոյ թագաւորական գահը: Դժբախտն Մաքսիմիանոս կը կարծէր որ ժողովրդեան ազատ ընտրութեամբը պիտի կարենայ կանոնաւոր տէրութիւն մը հիմնել և այնպէս սկսանել քաղաքագիտական և յառաջադիմական վերանորոգութիւն մը. բայց խաբուեցաւ. և այս խաբէութեան հետեանքներն քաջածանօթ են բոլոր աշխարհի, ուստի և աւելորդ կրկին անգամ յիշատակել հոս:

Երբ Մաքսիմիանոս ամենայն յաջողութիւն գտնալու յուսով ճամբայ պիտի իյնար դէպ 'ի Մեքսիկոյ, իր Շէօնպրունի զուարճալի պարտէզը՝ զոր հիանալի տեղ մը դարձուցեր էր 'ի բնակութիւն, Հայդցիներէ հասարակութեան պարգևեց:

Յամին 1867 Մաքսիմիանոսի սպանութեան անակնկալ աղետալի դէպքն պատահելով, Հայդցիներէ հասարակութիւնն 'ի գութ շարժած և երախտագէտ առ իւր պարգևատուն, որոշեց այս վեհանձն և շարաքախտ իշխանին արձան մը կանգնել նոյն իր ընծայած պարտիզին մէջ, զոր և կատարեց: Այս

յիշատակարանին վրայ ըստ դատելոյ ճարտարաց և արուեստագիտաց մեծ ճարտարութիւն և կատարելութիւն կը տեսնուի:


Արձանը որ հայեալ թնդանօթից պղնձէ շինուած է, ութը ոտք և երկու բթաչափ բարձրութիւն ունի. և կանգնած է ֆարրարայի մարմորէ շինած ինն ոտք բարձրութեամբ պատուանդանի մը վրայ:

Այս յիշատակարանիս կանգման հանդէսը կատարուեցաւ փառաւորապէս յամին 1871 նոյեմբերի եօթին, յանդիման ֆրանկիսկոս Յովսէփ կայսեր և մեծամեծաց Տէրութեան:

### ԹԻԷՐ. ՄԱՔ ՄԱՀՈՆ ԵՒ ԳԱՂՂԻՈՅ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԱՐԱՆԸ

Ինկաւ Թիէր՝ ինչպէս կը նախագուշակուէր. աջակողմեանց և աջակեդրոնական կողմանց անհաշտ ատելութիւնն ընդդէմ Թիէրի՝ վերջապէս յաղթանակեց և տապալեց զԹիէր յիշխանութենէ:

Ինչ էր արդեօք անոնց այնքան անողորքելի ատելութեան, որով և Թիէրի այնքան արդիւնաւոր անձի մը կործանման պատճառը: Մեծանուն աշխարհագէտը ուղելով վերջ մը տալ երկրին առժամանակեայ և անհաստատ վիճակին, և հետեաբար ապահովել Գաղղիոյ բախար, ուղեց իբրև որոշեալ և հաստատ կառավարութիւն հրատարակել հանրապետական կառավարութիւնը. և ահա այս պատճառաւ Ազգային ժողովոյն մէջ եղած անվերջանալի կռիւն որ մինչև ցայնժամ ուրիշ կերպարան ունէր, փոխուեցաւ և եղաւ կռիւ ընդ մէջ հանրապետականաց և



միապետականաց: Միապետականք, ինչպէս յայտնի է, շատ աւելի են թուով քան զհանրապետականս, և ահա իրենց այս մեծամասնութեան վրայ վրատահացած, ամեն ճիգ և հնարք 'ի գործ դրին այս հանրապետութեան հրատարակումը խափանելու, և թիէր ալ իր կողմանէն համոզուած իւր առաջարկութեան օգտակարութեանը և կարևորութեանը, մինչ յառաջ մղել կը ջանար իւր կամքը, Ազգային ժողովոյն մէկ քուէարկութիւնը ամենայն խնդիր լուծեց, թողուցին զթիէր 'ի նախագահութենէ, և այսպէս յաղթանակեցին Միապետականք, կատարուեցաւ իրենց կամքը և դադրեցաւ յուղմանց պատճառը:

Ազգային ժողովոյն մի մասը արդէն շատոնց այս մտքերն ունէր. արդէն քանի մ'անգամ այս անկման քուէն մտածած՝ նա մանաւանդ ջանացած ալ էր տալու ընդդէմ թիէրի, բայց միշտ յետս ընկրկած էր, և ամեն անգամ յետ ցուցընելու իր հակառակութեան հոգին, 'ի նպաստ իրեն քուէարկու լինելով լմընցուցած էր խնդիրը: Բայց այս անգամ կորոյս իր համբերութիւնը. վասն զի մտածելով այն մեծ զոհն որ պիտի ընէր ընդունելով հանրապետութիւնը իբրև որոշեալ և հաստատ Տէրութիւն, ալ չիկրցաւ համբերել, և ապահով ըլլալով այս անգամ որ կայ մարդ մը որ յանձն պիտի առնու յաջորդ ըլլալ թիէրի, տուաւ վերջապէս այն ատելութեան քուէն զոր երկու տարիէ 'ի վեր 'ի կախ թողած էր յերկիւղէն՝ մտածելով այն հետեանքներն որ կրնային պատահիլ:

Բայց թիէր այսպիսի անիրաւութեան և անարգութեան մ'առջին չէր կրնար համակամութեամբ լռել: Իր նախագահութեան ակթողոյն հրաժեշտ տալէն առաջ, ատենաբանութիւն մ'ըրաւ, յորում մեծանուն ճարտարախօսը փորձեց ամեն թելերուն դպչիլ, յուսալով գտնալ այնպիսի թել մը որ մեծամասնութեան առջին ոյժ մ'ունենայ. բայց 'ի զուր: Բողոքեց Ազգային ժողովոյն

հայրենասիրութեանը, յիշեցուց իր բռնած քաղաքագիտութենէ յառաջ եկած բարիքներն, այսինքն յաղթութիւնն որ ընդդէմ խռովարարաց Բարիզու, փոխառութեանց յաջողութիւնը, Գաղղիոյ հրաշալի ազատումը, և պատերազմի պարտուց գողցես ամբողջական վճարումը: Յուցուց դարձեալ որ միապետութեան հրատարակումը անհնարին է, ինչու որ մի է գահը և անոր հետամուտքը երեք: Բայց իր ատենաբանութիւնը և ամեն ջանքը 'ի դերևելան:

Եւ ահա այսպէս ինկաւ յաթոռոյ այն անձն, որուն պարտական է Գաղղիա իր այժմեան չըսեմ բոլորովին անգորր բայց երջանիկ վիճակը: Թիէր այնպիսի ժամանակ անցաւ 'ի զլուխ ազգին, և այնպիսի ժամանակ առաւ իր ձեռքը կառավարութեան սանձը, յորում Գաղղիա 'ի տարածայնութեանց և 'ի հերձուածոց դէպ 'ի կործանումն կը դիմէր, և ահաւոր ու զօրաւոր թշնամին բռնացած երկրին միոյ մասին վերայ կը սպառնար տարածել իր իշխանութիւնը մինչև ցովկիան և Միջերկրական ծով և մինչև ցՊիրենեան լեռինս: Ինչըրաւ մեծահանճար քաղաքագէտը միացուց գաղղիական ազգը յանուն հայրենասիրութեան, ընկերվարականաց խռովութիւնն զսպեց, վերակազմեց բանակը, կարգաւորեց ելումուտքը, Գաղղիոյ պատիւը պահեց, հաստատեց և պահեց կարգ և խաղաղութիւն, վճարեց թշնամոյն այն մեծ գումարը և արտաքսեց զնա 'ի Գաղղիոյ: Ուրեմն գիտնալով այս մեծամեծ արդիւնքներն, կ'ըսեմք որ Գաղղիա կերպով մը անիրաւեցաւ իրեն, քանի մը ժամուան մէջ մոռցաւ թիէրի Գաղղիոյ մատուցած մեծամեծ ծառայութիւնները, և այնպիսի եղաւ իր զայրոյթն որ և ոչ բնական պատշաճութեանց ուշ դրաւ: Հաստատութեամբ մտաց ընդունեցաւ իր հրաժարումը, փոխանակ զի պիտի մերժէր և ժողով գումարելով մէկէն յաջորդ դրաւ զմարաշխատն Մաք Մահոն:

Թիէրի հետ իր պաշտօնարանն ալ ինկաւ և կազմեցաւ նոր պաշտօնարան մը այս անձանցմէ .

- Մաք Մահոն . Նախագահ Հանրապետութեան .
- Պրոկլի . Պաշտօնեայ արտաքին գործոց .
- Մայն . » Ելումտից .
- Պաթպի . » Հասարակաց կրթութեան և կրօնից .
- Տըզէլլինեի . » Հասարակային շինութեան .
- Պույլեըրի . » Առևտրական գործոց .
- Էլնուլ . » Արդարութեան և դատական գործոց .
- Պէօլէ . » Ներքին գործոց .
- Տոմբէիր տ'Օրնուա . » Ծովային գործոց .

Ասոնք են ահաւասիկ որ կոչեցան յետ Թիէրի կառավարել զբախտ Գաղղիոյ : Եւ որովհետև քաղաքագէտ անձանց անցեալ կեանքը, կրնայ իբրև հաւանական նշան մը համարուիլ իբրենց ունենալի ներկայ և ապագայ կենացը, անոր համար կու տամք հոս համառօտիւ մեր ընթերցողաց մէկ քանի տեղեկութիւն Գաղղիոյ այժմեան պաշտօնարանին վրայ .

### ՄԱՔ ՄԱՀՈՆ

Մաք Մահոն Գաղղիոյ զինուորութեան մեծ փառք և պարծանք է, և ասոր ոչ ոք կրնայ տարակուսիլ : Ալճերիոյ արշաւանքէն՝ ուր փայլեցաւ նախ իւր հանճարովն՝ իջնելով ոտն առ ոտն մինչև Ղրիմու պատերազմը՝ յամին 1855, և անկէց ալ մինչև իտալիոյ անկախութեան պատերազմը յամին 1859, միշտ զինուորական փառք պայծառացաւ :

Թէպէտ Գաղղիոյ իրուսիոյ հետ ունեցած վերջին ճակատամարտին մէջ չունեցաւ Մաք Մահոն իր առաջին յաջողութիւնը, բայց անարատ պահեց իր փառքը և անունը : Մաճենդայի դուքսը միշտ հաւատարիմ զօրական հանդիսացած է յաշխարհի, և ամեն ատեն ու ամեն ազգ կառավարութեան ատեն միշտ հաւատարմութեամբ և քաջութեամբ ծառայած է իր հայրենեաց :

Այս հաւատարիմ և արդիւնաւոր անձը իռլանտացի ընտանեաց մը սե-

րունդ է, բայց ինքը Մաք-Մահոն Գաղղիոյ մէջ ծնաւ յամին 1808 յուլիս 13 : Իր զինուորական ուսումը Սէն Սիրի համբաւաւոր դպրոցին մէջ կատարեց, և առաջին անգամ զէնք շարժեց յԱփրիկէ և ապա՝ ի Պելճիա : Յամին 1833 դարձաւ միւսանդամ յԱլճերի, և նշանաւոր եղաւ կոստանդինա քաղաքին յարձակման մէջ : Յամին 1852 զօրապետ անուանեցաւ, և երեք տարի ետքը լէզէոնական պատուոյ մեծախաչ պատուանշանաւ պատուեցաւ : 1855ին Բարիզ կանչուեցաւ և Ղրիմու պատերազմին մէջ մեծամեծ քաջութիւններ ըրաւ Պոսքէ Մարաշախտին ձեռացը տակ : Շատ անուն ստացաւ Մալաքովի առմամբը, և կայսրը ուզելով վարձատրել զինքը, անգամ անուանեց ծերակուտի կայսրութեան :

Յամին 1857 վերադարձաւ յԱլճերի, և ընդհանուր հրամանատար անուանեցաւ ցամաքային և ծովային զօրութեան :

Իտալիոյ անկախութեան պատերազմին մէջ դեռ աւելի աճեցաւ իր անուն համբաւը, և Մաճենդայի շքեղ յաղթութեանցը համար կոչեցաւ Մարաշախտ Գաղղիոյ՝ ի վերայ դաշտի պատերազմի և դուքս Մաճենդայի, և այս եղաւ յամին 1859 յունիս 4, 1864ին վերադառնալով յԱփրիկէ իբրև ընդհանուր կառավարիչ, փորձեց հաստատել հոն արաբական կառավարութիւն մը, բայց ակնկալութեանը չհասաւ և տեղաբնակ ժողովրդոց մէկ քանի

անգամ հանած խռովութիւններէն ետքը, ստիպուեցաւ աւելի զօրաւոր կառավարութեան մը ձեռք զարնել: Եւ որովհետեւ այս ատեններս Գաղղիոյ խորհրդարանը Ալճերիոյ համար քաղաքական կառավարութիւն մը կ'առաջարկէր, ասիկա հակառակ ըլլալով Մաք Մահոնի գաղափարացը, յամին 1870 հրաժարեցաւ իր պաշտօնէն, բայց ընդունելի չեղաւ հրաժարումը:

Մինչդեռ Մարաշխատը հաստատութեամբ մտաց կը պնդէր թողլու զԱլճերիա, ծագեցաւ Գաղղիա-Բրուսիական պատերազմը, ուստի շուտ մը ետ կանչուելով, գլուխ դրուեցաւ Ա. Բանակին պաշտպանելու զԱլսացիա: Օգոստոսի 4ին Տուէյ զօրապետը որ կը հրամայէր Մաք-Մահոնի բանակին յառաջապահ գնդին, յաղթուեցաւ 'ի Բրուսիացւոց 'ի վայսեմպուրկ, և երկու օր ետքը Մարաշխատն իսկ պարտեցաւ 'ի վօրթ, և նոյն պատերազմին մէջ կորսընցուց 4000 զերի 36 թնդանօթ և երկու դրօշ:

Եւ մինչ Մաք-Մահոն այս պարտութենէն ետքը իր ամեն զօրութիւնը 'ի մի ժողովելով կը պատրաստուէր կրկին փորձ փորձելու ընդդէմ թշնամւոյն, իր համոզմանը հակառակ բայց Բալիքայոյ կոմսին յայտնի հրամանաւը որ պատերազմի պաշտօնեայ էր, բռնադատուեցաւ իր բռնած պատերազմական դիրքն թողուլ և օգնութեան հասնիլ Պազէնի, 120,000 զօրքով: Բայց այս խորհուրդը փոխանակ օգտակար ըլլալու մահաբեր եղաւ՝ Մաք Մահոնի, իր բանակին և բովանդակ Գաղղիոյ, ինչու որ Բրուսիացիք իմանալով անոնց միտքը առջևնին առին և արգիլեցին, չթողլով ոչ յառաջել և ոչ ետ քաշուիլ: Օգոստոսի 31ին պաշարուեցաւ Մաք Մահոն 180,000 գերմանական զօրաւոր բանակէ մը, և սեպտեմբերի 1ին ժամը եօթին վէրք մ'առաւ և Ուտանի զինաթափութեամբն զերի մնաց 'ի ձեռս Գերմանացւոց:

Ամեն բան լմրննալէն, Նաբոլէոնի իյնալէն և խաղաղութիւնը վերահաս-

տատուելէն ետքը Գաղղիա դարձաւ, և վէրսայլի բանակին հրամանատար անուանուելով քալեց ապրստամբաց դէմ որ տիրեր էին Բարիզու: Հաւատարիմ և հայրենասէր Մարաշխատն այն աղէտալի քաղաքական պատերազմին մէջ իր ամեն ջանքն և գործունէութիւնն բանեցուց յօգուտ և 'ի սէր հայրենեաց, որուն փորձն արդէն այնչափ անգամ զարմանալի կերպով տուած էր:

Երբոր յաղթեց խռովարարաց և տիրեց Բարիզու և ազատեց զԳաղղիան սպառսպուռ կործանմանէն, 'ի ցոյց երախտագիտութեան և 'ի վարձ իր արդեանցը՝ իրեն այլևայլ քաղաքական պաշտօններ կ'առաջարկէին, ինքը ամենքէն ալ հրաժարեցաւ, մերժեց և այն սուսերն իսկ որ կ'ընծայէին իրեն 'ի պատիւ՝ հասարակաց համաձայնութեամբ: Հրաժարեցաւ դարձեալ փոխանորդ նախագահի պաշտօնէն. բայց մայիս ամսոյն 24ին քուէարկութեանը չկարենալով ընդդիմանալ՝ յանձն առաւ ոչ առաւել մեծի դժուարութեան և տաժանելի պաշտօնը:

Այսպիսի է ահաւասիկ թիէրի յաջորդ Հանրապետութեան նախագահին կեանքը որ ընտրեցաւ 390 քուէիւ: Մաճենդայի դուքսը, այր զինուորական, թէպէտ միշտ հեռու կեցած էր քաղաքագիտական պաշտօններէ, բայց այս անգամ զիջաւ, տեղի տուաւ և ընդունեցաւ այդպիսի դժուարին պաշտօն այսպիսի բազմակնճիռն ժամանակիս մէջ: Այս կերպով թէպէտ Գաղղիոյ բախտը այնպիսի մարդու մը ձեռք անցաւ որ մեծ է յաշխարհի իր զինուորական գործոց շքեղ արարուածներովն, բայց իր քաղաքագիտութեանը վրայ չեմք համարձակիր դատաստան մ'ընել, ինչու որ առաջին անգամ է որ 'ի հանդիսի անցանէ այդու պաշտօնիւ:

### ՊՐՈԿԼԻ

Ալբերտոս դուքսն Պրոկլի՝ գաղղիացի վաղեմի ընտանեաց մը սերունդ է : Իր հայրը Վիկտորիոս Պրոկլի նախ հասարակաց կրթութեան Պաշտօնեայ եղաւ, և ապա արտաքին գործոց . և ետքը յամին 1834 Լուդովիկոսի Փիլիպպոսի թագաւորութեան ատեն նախագահ խորհրդարանի անուանեցաւ : Ինքը թէ պէտ ուղղափառ էր, բայց իր սկզբունքներն աւելի ազատական էին քան թէ չափաւորեալ : Իր մայրը եռանդուն բողոքական մ'էր, և էր միակ դուստր Սդաէլ տիկնոջ՝ հեղինակ Խորհրդաւճոռքիւնք 'ի վերայ գաղղիական Յեղափոխութեան անուանեալ գրոց : Ծնաւ Ալբերտոս յամին 1821 յունիս 13, և երիտասարդութեան հասակէն ծանօթացաւ անունը օրագրաց մէջ հրատարակած յօդուածներովն, և առաւել ևս յաւելաւ համբաւը յամէ 1846 մինչև ցամն 1860 հրատարակած Եկեղեցի և Կայսրութիւն Հռովմայ, Պապական Տէրութիւն և Ազատութիւն . Աստուծայի Ազատութիւն և Մարդկայի Ազատութիւն անուանեալ գիրքերովն :

Ալբերտոս Պրոկլի յամին 1871 նուիրակ ընտրուեցաւ, ետքը դեսպանական պաշտօնիւ Լոնտրա ղրկուեցաւ և Գաղղիոյ Ազգային Ժողովոյն գործոց մէջ մեծ մասն ունեցաւ . Անցեալ տարի յունիսի 20 ին աջակողմեանց նուիրակներէն մէկն էր երբ կ'ուզէին ստիպել զթիէր որ ժողովոյն մեծամասնութեան համամատ կերպ մը բռնէ : Ինքն էր որ յանուն այս մեծամասնութեան գրգռեց այն հարցափորձ քննութիւնը որ թիէրի անկումը պատճառեց :

### ՄԱՅՆ

Պետրոս Մայն ոչ մեծազգի ընտանեաց սերունդ, ծնաւ յամին 1806 : Թողոզա քաղքին մէջ փաստաբանութեան ուսումը կատարելէն ետքը, նոյն քաղքին մէջ խորհրդական եղաւ յա-

մին 1835, 1843ին նուիրակ ընտրուեցաւ, և մինչև ցամն 1848 զանազան տրնտեսական գրուածքներ հրատարակեց, որոնցմով տնտեսագիտի անուն ստացաւ : Յամին 1851 հասարակային շինութեան պաշտօնեայ անուանեցաւ, և յաջորդ տարին՝ անդամ ծերակուտի, և երկու տարի ետքը պաշտօնեայ ելումից : Յամին 1861 երբ հրատարեցաւ նոյն պաշտօնէն, Նաբոլէոն զինքը ներքին խորհրդարանի անդամ անուանեց :

Յամին 1864 կոչեցաւ դարձեալ 'ի Պաշտօն ելումից, բայց Օլիվիէրի ատեն նորէն առանձնացաւ : 1870ին օգոստոսի մէջ դարձեալ ելումից Պաշտօնեայ եղաւ, բայց նոյն տարուան սեպտեմբերի 5ին խռովութեան պատճառաւ նորէն առանձնացաւ :

Բայց հիմա դարձեալ Մաք Մահոնի նախագահութեան ատեն ելումից Պաշտօնեայ անուանեցաւ :

### ՊԱԹՊԻ

Անսելմոս Պողիկարպոս Պաթպի կըտրիճ և անուանի իրաւագէտ, ծնաւ յամին 1828 : Ուսուցիչ եղաւ իրաւանց 'ի Տիժոն, 'ի Թողոզա և 'ի Բարիզ . իրաւագիտութեան վրայ զանազան գիրքեր հրատարակեց, և շատ անգամ վարձատրեցաւ գիտութեանց ճեմարանէն :

Յամին 1871 իւր հայրենիքը զինքը Ազգային Ժողովոյն մէջ ներկայացուցիչ անուանեց : Այն հնդետասան անձանց մէ մէկն էր որ խաղաղութեան դաշինքներն հաստատեցին Պրոկլիի հետ մէկտեղ, յամին 1872 յունիսի 20 . այն նուիրակաց կարգէն էր որ յանուն աջակողմեանց կ'ուզէին ստիպել զթիէր որ պահպանողական կողման համաձայն քաղաքագիտութեան հետևի : Եւ է այժմ Պաշտօնեայ հասարակաց կրթութեան :

### ՏԸՉԷԼԼԻՆԵԻ

Տըզէլլինի Բարիզ ծնաւ յամին 1828 մայիս 8 . և նուիրակի պաշտօն ունեցաւ 1869 :

1871 տարւոյն փետրուարի ընտրութեանց ատեն իբրև նուիրակ զրկուեցաւ Ազգային ժողովոյն: Չախակողմը նստաւ և քուէ ձգեց արտասահմանութեան օրինաց ջնջման, և Օռլէանեան իշխանաց ընտրութեան վաւերացման խնդրոց. իսկ Հռովմայ ժամանակաւոր իշխանութեան խնդրոյն մէջ տէրութեան դէմ շարժեցաւ. և է այժմ Պաշտօնեայ հասարակային շինութեան:

### ՊՈՒՅԼԵԸՐԻ

Յովսէփ Պուլեբրի Բարիզ ծնաւ յամին 1822 մարտ 26: Իր առաջին քաղաքագիտական պաշտօնն եղաւ նուիրակ ըլլալ Մէն-Լուառ նահանգին. խորհրդարանին մէջ աջակողմը նստաւ, և է այժմ Պաշտօնեայ առևտրական գործոց:

### ԷԼՆՈՒԼ

Էլնուլ ծնաւ ՚ի Լուտէօն յամին 1829. նախ Բուադիէի փաստաբանից գլուխ եղաւ, և ապա յամին 1871 նուիրակ ընտրուեցաւ Ազգային ժողովոյն, և նստաւ աջակողմը. և է այժմ Պաշտօնեայ արդարութեան և դատական գործոց:

### ՊԷՕԼԷ

Կարոլոս Եռնեստ Պէօլէ մեծանուն հնագէտն՝ ծնաւ ՚ի Սոմիւր 1826ին: Նախ ճարտասանութեան ուսուցչութիւն կ'ընէր Աթէնք եղած գաղղիական դպրոցին մէջ. և ապա յամին 1854 հնագիտութեան ուսուցիչ անուանեցաւ կայսերական գրատան, և 1860ին անդամ Գաղղիոյ գիտութեանց ճեմարանին: Այլևայլ գրուածքներ հրատարակեց հին Յունաստանի և գեղարուեստից վրայ: Բայց իր քաղաքագիտական կեանքը բուն 1871ին սկսաւ երբ նուիրակի պաշտօն ունեցաւ: Բազում և զանազան Յանձնաժողովոց մէջ մասն ու

նեցաւ և նստաւ Ազգային ժողովոյն աջակողմը, և ընդդէմ տէրութեան քուէ ձգեց Պապին ժամանակաւոր իշխանութեան խնդրոյն մէջ. և է այժմ Պաշտօնեայ ներքին գործոց Գաղղիոյ:

### ՏՈՄՐԻԷՐ ՏՕՐՆՈՒԱ

Ալբերտոս Տոմրիէր տ'Օրնուա ծնաւ ՚ի Բարիզ 1816 տարւոյն փետրուար ամսոյն մէջ, և արենակից ազգական է վոլթէրի հետ: Յամին 1828 ծովային զինուորութեան մէջ մտաւ, և 1854ին կայսերական Էկլը անուն պատերազմական նաւուն նաւապետութեան պաշտօնիւ պատուեցաւ: Յամին 1864 երրորդ ծովակալի պաշտօն ընդունելով՝ զրահաւոր նաւու մը նաւապետ եղաւ: 1870ին սեպտեմբերի 4ին խռովութեան ատեն ծովային գործոց առժամանակեայ պաշտօնեայ անուանեցին զինքը: Ետքը Սոմ նահանգէն Ազգային ժողովոյն նուիրակ ընտրուելով՝ աջակողմը նստաւ. և Պապին ժամանակաւոր իշխանութեան խնդրոյն մէջ ընդդէմ Տէրութեան ձգեց իր քուէն: Յամին 1871 փոխանորդ ծովակալի անուանեցաւ, և է այժմ Պաշտօնեայ ծովային գործոց:

Ասոնք են ահաւասիկ պաշտօնեայք և տեսարք Գաղղիոյ, ընտրեալք կամօք և համաձայնութեամբ Ազգային ժողովոյ: Հետաքրքրութեամբ և մտադիր աչօք կը սպասէ և կը դիտէ Եւրոպէ թէ ինչպէս արդեօք ՚ի գլուխ պիտի տանին այս ծանր և կարևոր պաշտօնը, և վերջապէս ինչ եւք պիտի ունենայ. ինչպէս պիտի հատուցանեն հինգերորդ միլիարտին մէկ մասը, և պիտի պահեն այն նիւթական կարգը և անդորրութիւնը՝ զոր անարատ ընդունեցան թիէրի ձեռքէն: Այս բաներս թէպէտ այնքան դժուարին չեն, այլ և ոչ այնքան դիւրին: Բայց նիւթական կարգէն զատ պարտաւորեալ են հաստատել և պահել բարոյական կարգ մ'ալ, և ահա

հոս կը դժուարանայ գործը և տարա-  
կոյաներն ու երկամտութիւններն կըսկսին  
թէ արդեօք պիտի յաջողին յայսմ:

Ինչ կերպով կը պահուի բարոյա-  
կան կարգ, կրնայ հարցընել մէկը: Կը  
պատասխանեմք, որ բարոյական կարգ  
այն ատեն կը պահուի, երբ Պոնաբար-  
դեանք կոյր հաւատք ունենան Պոնա-  
բարդի հանճարոյն վրայ, Օուլէանեանք  
կոյր սէր Օուլէանի թագաւորական ցե-  
ղին վրայ, և Պուրպոնեանք կոյր հպա-  
տակութիւն Շամպոր կոմսին վրայ:  
Եւ որովհետեւ շատ դժուարին է այս  
բարոյական կարգաւորութեան երեք  
ձևերն իրարու հետ յարմարելն, որ  
փոփոխակի զիրար եղծանել կը ջանան  
միշտ, անոր համար խաղաղութիւնն  
ալ թէպէտ առ ժամանակ մի պահուի,  
բայց անհաստատ է իւր տևականութիւն  
և ՚ի վտանգի կայ Գաղղիոյ բախտը:

Կայ տեսակ մը խռովութիւն որ յայս-  
նապէս ճանապարհաց մէջ կը գոր-  
ծուի, ՚ի լոյս տուրնջեան խաժամութ  
ժողովրդեան յուզմամբը. և այսպիսի  
խռովութիւնք կը տապալեն զՄիապե-  
տութիւնս: Կայ ուրիշ տեսակ մ'ալ որ  
գործի ծածուկ ՚ի մթութեան գիշերոյ,  
և կը վերջանայ բանտարգելութեամբ,  
արտասահմանութեամբ և մահուամբ.  
և այսպիսի խռովութիւնք կործանեն  
ղՀանրապետութիւնս: Բայց Գաղղիոյ  
մէջ պատահածն ոչ մէկն է և ոչ միւսը.  
և այս անտի յայտ է որ օրէնքներն ան-  
խախուտ մնացին, և գոզցես կառավա-  
րութիւնն իսկ նոյն մնաց և կառավա-  
րիչներն միայն փոխուեցան: Ոչ թէ մեք  
միայն այլ և Գաղղիա իսկ՝ գործը այս  
կերպով դատեց, և անոր համար ալ  
վերջին մեծամեծ պատահարաց սաստ-  
կութենէն ոչ խռովեցաւ և ոչ շփոթե-  
ցաւ: Այս կերպով դատեցին և երեք  
միապետական կողմնակցութիւնք, ո-  
րոնք կրնային այս եղած փոփոխու-  
թիւնը՝ պատեհ առիթ մ'առնուլ իշխա-  
նութեան հասնելու: Լաւ իմացուեցաւ  
որ միապետականաց իրարու հետ միու-  
թիւնը Հանրապետութիւնը տապալել  
չէր, այլ խափանել անոր իբրև որո-

շեալ կառավարութիւն հրատարակե-  
լու փորձը: Լաւ գիտեն իրենք ալ որ  
ուրիշ կերպով չեն կրնար ՚ի խաղա-  
ղութեան պահել Գաղղիա, բայց եթէ  
ընդունելով այն ձև կառավարութիւն՝  
զոր ժամանակիս պարագաներն սահ-  
մանեցին: Նոյն իսկ հիմա թէպէտ յաղ-  
թական են, բայց յոտին մնալու հա-  
մար պէտք են պահել նախկին կառա-  
վարութիւնն և իր կարգադրութիւն-  
ներն: Յաղթականն և յաղթեալ որոնք  
առաջ պահանջողական և բուռն կերպ  
մ'ունէին՝ հիմա ամենքն ալ խոհեմու-  
թեամբ կը շարժին: Յաղթականը դեռ  
յափշութեան է, զարմանալով իր ը-  
րած անակնունելի յաղթութեանը վրայ.  
Իսկ յաղթեալն կը վախնայ մեծագոյն  
պարտութենէ մը: Միով բանիւ երկու  
կողմանք ալ իմացան որ սխալ ճամբու  
մը ձեռք զարկին, և թէ չիք փրկութիւն  
Գաղղիոյ, բայց եթէ խաղաղութեամբ  
և հաշտութեամբ երկոցունց կողմանց:

Կառավարութեան նոյն մնալուն և  
կառավարչաց միայն փոխուելուն մէկ  
նշանն ալ այն է, որ Պ. Պրոկլի այժմեան  
արտաքին գործոյ Պաշտօնեայն Գաղղիոյ  
օտար տէրութեանց քով եղած Պաշտօ-  
նէից ուղղած մէկ յայտարարութեանը  
մէջ կ'ըսէ, որ ամենեին բան մը չի փո-  
խուեցաւ և պիտի չփոխուի, այլ պի-  
տի շարունակուի նախկին կառավա-  
նութեան քաղաքագիտութիւնն: Այս  
բանս անով աւելի զարմանալի է, որ  
մինչ իրենք ասկէց քանի մ'ամիս ա-  
ռաջ ձայներնին ինչուան երկինք բար-  
ձրացուցած կ'աղաղակէին որ այս կերպ  
քաղաքագիտութիւնն կը վնասէ Գաղ-  
ղիոյ ամենէն սրբազան շահուցը և կը  
դատապարտէ մնալ կղզիացեալ աղե-  
տալի վիճակի մէջ, հիմա իրենք են որ  
նոյն ճամբուն կը հետևին:

Բայց փոյթ չէ, արդէն այս է ամե-  
նուն փափաքը. խաղաղութիւն և ան-  
դորրութիւն: Բայց դժբախտաբար՝ զի-  
տելով և փորձելով իրաց կարգը՝ չեմք  
կրնար յարատևական խաղաղութիւն  
մը յուսալ: Թէպէտ ըստ արտաքին տե-  
սութեան յաղթականն և յաղթեալ ՚ի

նմանօրինակ վիճակի կան, բայց յաղթականք տակաւ պիտի սկըսին իրարու մէջ տարաձայնիլ. իւրաքանչիւր կողմն առաջուան պէս պիտի ջանայ բնակահարար տարածել իր ուժը և հեղինակութիւնը Գաղղիոյ մէջ. և իւրաքանչիւր կողմնակցութիւն պիտի նախանձի և հակառակի իւր նախանձընդդէմ կողման ունեցած առաւելութեանը վրայ: Պուրպոնեանք և Օուլէանեանք պիտի նիւթեն և գործեն ընդդէմ Պոնաբարդեանց, և Պոնաբարդեանք ալ փոխադարձաբար ընդդէմ անոնց: Երեք յաղթականներն իրարու վրայ կասկածանօք պիտի նային, և իմանան պիտի թէ ըրած յաղթութիւննին վնասակար եղաւ իրենց քան թէ օգտակար:

Ըսածնիս երեւակայական գուշակութիւնք չեն. արդէն քիչ շատ հիմակուրնէ փորձով ալ ստուգուեցան: Պոնաբարդեանք զօրացան այնքան մինչև արգելուլ Օտիֆրէ Բապիէի ընտրութիւնը, որ Կայսրութեան դէմ ատենաբանութիւն մ'ըրեր էր դատապարտելով անոր բռնած ընթացքը: Բայց Պոնաբարդեանք չշատացան այսու յաղթութեամբ, և ոչ զՊ. Մայն ելումտից Պաշտօնեայ անուանելով, այլ կ'ուզեն ուրիշ Պոնաբարդեան մ'ալ քաղաքային ոստիկանութեան ընդհանուր նախագահ անուանել:

Ուրիշ կողմանէ Պուրպոնեանք ալ ուզելով իրենց կողմը զօրացնել, փութացան Շամպոր կոմսը Գաղղիա հրաւիրել. բայց Մաք Մահոն այս գործոց վնասակարութիւնն տեսնելով՝ ըսաւ յայտնապէս Պուրպոնեանց, որ եթէ իրենք Գաղղիա բերել տան Շամպոր կոմսը, ինքն ալ զԵւգինիա՝ Նաբոլէոն Գին այրին բերել կու տայ:

Եթէ այս տարաձայնութիւններն զօրանալու ըլլան, շատ կը դժուարանայ Մաք Մահոնի գործը: Թիէրի երկու տարուան նախագահութեան ժամանակ զլիսաւոր ջանքն եղաւ ՚ի հաւասարութեան պահել զՄիապետականս և զՀանրապետականս: Իսկ հիմա Մաք Մահոնի ջանքն պիտի ըլլայ ՚ի հաւա-

սարութեան պահել երեք միապետական կողմնակցութիւններն. ուստի այս պարագայիս մէջ շատ աւելի դժուարին է Մաք Մահոնի գործը, ինչպէս և ինքն թիէր խոստովանեցաւ առթի մը մէջ:

Բայց Մաք Մահոնի միակ ապաստանարանը և յոյսը բանակն է, և անով կը յուսայ միայն պահել ՚ի խաղաղութեան զԳաղղիա: Իւրաքանչիւր կողմնակցութիւնք աղէկ կ'ըմբռնեն որ անխոհեմ գործողութիւն մը կրնայ իրենց մահացու ըլլալ. և թէ հիմա Հանրապետութեան նախագահը բանակին սիրելի զօրապետն ըլլալով՝ շատ վտանգաւոր է կիրքերը գրգռելը և խռովութիւն մը յարուցանելը: Եւ ամենևին տարակոյս չկայ որ Մաք Մահոն պէտք եղած ժամանակ պիտի գործածէ բանակին առ ինքն ունեցած սէրը: Արդէն առ բանակն ըրած մէկ յայտարարութեանը մէջ աւելի ևս զօրացուց զինուորաց իրեն վրայ ունեցած սէրը, ցուցընելով թէ ինչպէս մեծ պատիւ է բանակին Ազգային ժողովոյն այսպիսի մեծ պատուով իրենց զօրապետը պատուելը: Եւ իրենց առ Մաք Մահոն ըրած մեծ ծափահարութիւններն կը ցուցընեն թէ ինչպէս կը զգան իրենց զօրապետին եղած մեծ պատիւն, և թէ պատրաստ են պէտք եղած ժամանակ հաւատարմութեամբ ծառայել իրենց զօրապետին և նպաստամատոյց ըլլալ Գաղղիոյ խաղաղութեանը և երջանկութեանը:

ՆԱԽԱԳԱՀՔ ԱՒՍՏՐԻՈ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՐԱՆԻՆ

Եթէ այս օրուան օրս Հունգարիոյ այն համբաւաւոր զիւցազուներն որ հայրենեաց սիրոյն ողջակէզ եղած զոհեցին իրենց կեանքը ահաւոր կախաղանաց վրայ, յառնէին ՚ի կեանս, թօթափելով և քակելով այն քստմնելի կապն, որով պնդեցան կախաղանաց վրայ իրենց վիզերն, և տեսնային Հունգարիոյ